Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
«1032-11002/2024-ԼՎ-2» պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 3

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	«Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» (Վանաձոր 2)
Դրամաշնորհի N	«1032-11002/2024-ԼՎ-1»
Դրամաշնորհատու կազմակերպություն	ԱՍՀՆ
Դրամաշնորհառու կազմակերպություն	«Հայկական Կարիտաս» ԲՀԿ
Ծրագրի իրականացման ժամանակահատված	15.01.2024 - 31.12.2024
Հաշվետու ժամանակահատված	01.07.2024 - 30.09.2024
Ներկայացման օր	14.10.2024
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	Հասմիկ Հովսեփյան, ծրագրի համակարգող

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

Հաշվետու ժամանակահատվածի համար պլանավորված գործողություններն են.
1) Կենցաղային սպասարկում
2) Բժշկական օգնություն և սպասարկում
3) Սոցիալ-հոգեբանական օգնություն
4) Խորհրդատվության օգնություն
5) Լվացքատան ծառայություն
6) Չոր սննդի տրամադրում
7) Առաջին օգնության դեղորայքի տրամադրում
8) Մշակութային միջոցառման կազմակերպում

2.2. Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Սոցիալ-հոգեբանական օգնություն և խորհրդատվություն

Հաշվետու ժամանակահատվածում սոցիալական աշխատողի կողմից կատարվել է պետության կողմից ուղեգրված թվով 3 շահառուի անհատական կարիքի գնահատում և ըստ գնահատման արդյունքների կազմվել է անհատական սոցիալական ծրագիրը:
Ծրագրում ընդգրկված 3 նոր շահառուի հետ կնքվել են ծառայությունների մատուցման պայմանագրեր:
Հաշվետու ժամանակահատվածում սոցիալական աշխատողի կողմից կատարվել է թվով 2 շահառուի փաստագրում անապահովության գնահատման համակարգում:
Եռամսյակում սոցիալական աշխատողը կատարել է տնային այցելություններ շահառուների բնակարաններ, ծանոթացել շահառուների սոցիալ-առողջապահական ընթացիկ վիճակին:
Շահառուների սոցիալական խնդիրները լուծումներ են ստանում համապատասխան ծառայությունների տրամադրման, խորհրդատվությունների, միջնորդական ծառայությունների կամ անմիջական օգնության միջոցով:

<u>Կենցաղային սպասարկում</u>
Հուլիս-սեպտեմբեր ամիսներին սոցիալական խնամողների կողմից կատարվել է կենցաղային սպասարկում՝ ըստ պետական չափորոշիչների: Ա խմբի շահառուներին սոցիալական խնամողները կատարել են ամենօրյա այցեր, իսկ Բ խմբի շահառուներին՝ շաբաթական 2-ական այցեր: Նախապես կազմվել են այցելությունների գրաֆիկները, և այցելությունները կատարվել են այդ գրաֆիկներին համապատասխան:
Սոցիալական խնամողները մատուցել են հետևյալ ծառայությունները. Մարմնի ամբողջական, մասնակի խնամք, անձնական հիգիենայի պահպանում, լոգանք, տակդիրի փոխում, լվացքի կազմակերպում, արդուկում, բնակարանի հարդարում, սննդի պատրաստում, կերակրում, գնումներ, կոմունալ վճարումներ: Շահառուներին ուղեկցել են նաև խանութ, փոստատուն, բանկ՝ քարտային թոշակը կանխիկացնելու համար:
Հաշվետու ժամանակահատվածում գործել է նաև լվացքատունը, որտեղ լվացվել, արդուկվել են շահառուների հագուստները և հատկացվել վերջիններիս: Այն շահառուների լվացքը, ովքեր իրենց բնակարաններում ունեն լվացքի մեքենաներ, սոցիալական խնամողները լվացել են շահառուի բնակարանում:
Շահառուներն ապահովված են կենցաղային սպասարկման, հիգիենայի պահպանման ծառայություններով՝ ըստ անհրաժեշտության: Լվացքի, լոգանքի, տան մաքրության ծառայությունների շնորհիվ բարելավված է շահառուների հիգիենիկ վիճակը:

<u>Բժշկական օգնություն և սպասարկում</u>
Հաշվետու եռամսյակում բուժքույրերը շահառուների բնակարաններ այցելությունները կատարել են ըստ նախապես կազմված այցելությունների գրաֆիկի և պետական չափորոշիչների: Ա խմբի շահառուներին կատարել են շաբաթական 2-ական այցեր, իսկ Բ խմբի շահառուներին՝ շաբաթական 1-ական այց: Կարիքի դեպքում կատարել են նաև լրացուցիչ այցելություններ:
Այցելությունների ժամանակ կատարվել են արյան ճնշման, թթվածնի քանակի, շաքարի մակարդակի չափումներ, միջմկանային, ներերակային ներարկումներ, վերքերի մշակումներ, դեղորայքի ընդունման վերահսկում, խորհուրդներ, վերականգնողական վարժություններ, ականջի լվացում: Բուժքույրերը մշտական կապի մեջ են եղել շահառուների թաղամասային բժիշկների հետ: Թվով 1 շահառուի համար ստացել են պետության կողմից հատկացվող դեղորայքը և հատկացրել շահառուին:
Այցերի և մատուցված ծառայությունների վերաբերյալ կատարվել են նշումներ ծառայությունների մատուցման ստուգաթերթում, ինչպես նաև շահառուի բնակարանում գտնվող ծառայությունների մատուցման տնային թերթիկում:

Տրամադրված կանոնավոր բժշկական օգնության, առողջապահական ծառայությունների, դեղամիջոցների տրամադրման և բուժքույրերի հետևողականության շնորհիվ պահպանված և բարելավված է շահառուների կայուն առողջական վիճակը:

Սննդի, հիգիենիկ պարագաների և դեղորայքի հատկացում

Սեպտեմբեր ամսին շահառուներին հատկացվել են չոր սննդի փաթեթներ:
Հաշվետու եռամսյակում շահառուներին հատկացվել է նաև բժշկի կողմից նշանակված դեղորայքը, որը չի տրամադրվում անվճար, ինչպես նաև առաջին օգնության դեղորայք:

Սննդի, հիգիենիկ պարագաների ու առաջնային անհրաժեշտության դեղամիջոցների տրամադրման շնորհիվ մեղմվել են շահառուների սոցիալական կարիքները:

Մշակութային միջոցառման կազմակերպում

Սեպտեմբերի 12-ին կազմակերպվել է էքսկուրսիա Գյումրի քաղաք, որին մասնակցել են այս ծրագրի թվով 5 տարեցներ: Ուխտագնացությանն են միացել նաև Վանաձորի և Գյումրու Տնային խնամքի ծրագրի այլ շահառուներ: Տարեցները շրջել են քաղաքում, այցելել Սուրբ Յոթ Վերք և Սուրբ Ամենափրկիչ եկեղեցիներ, մոմ վառել, աղոթել Հայաստանի սահմանների խաղաղության համար: Հաճելի օրը շարունակել են բնության գրկում: Այն հնարավորություն է տալիս 2 մարզերի տարեցներին շփվել միմյանց հետ, զրուցել, վայելել մաքուր օդը, կիսել հոգսերն ու խնդիրները:

Սեպտեմբերի 30-ին՝ Տարեցների միջազգային օրվան ընդառաջ, կազմակերպվել է «Գուշակիր ֆիլմը» խաղ-մրցույթը, որին մասնակցել են ծրագրի թվով 6 շահառուներ: Միջոցառմանը մասնակցել են նաև Վանաձորի և Գյումրու Տնային խնամքի ծրագրի այլ շահառուներ: Ցուցադրվել են դրվագներ ՀԱՅՖԻԼՄԻ նկարահանած ֆիլմերից, որոնց անունները պիտի կռահեին տարեցները: Միջոցառումը կազմակերպվել է Վանաձորի ԼՈՖԹ կենտրոնում: Առավելագույն միավորներ հավաքած թիմն արժանացել է հավաստագրերի ու մրցանակների: Խաղ-մրցույթին իրենց մասնակցությունն են բերել Օրրան ԲՀԿ-ի պատանի դհոլահարները, ինչպես նաև Վանաձորի թիվ 22 դպրոցի աշակերտները: Վերջիններս տարեցներին նվիրեցին ծաղիկներ ու շնորհակալական բացիկներ:

Կազմակերպվող միջոցառումները նպատակ ունեն ինտեգրել միայնակ տարեցներին հասարակության մեջ:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են շաբաթական աշխատանքային հանդիպում-քննարկումներ, որոնց ժամանակ ամփոփվել են կատարված աշխատանքները, առաջացած հրատապ խնդիրները և պլանավորվել հաջորդ շաբաթվա անելիքները:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

Էքսկուրսիա Գյումրի
https://www.facebook.com/photo/?fbid=929616085869326&set=pcb.929618395869095

Տարեցների միջազգային օր
https://www.facebook.com/photo/?fbid=939503184880616&set=pcb.939504201547181

Բոլոր այցերի, միջոցառումների, իրականացված աշխատանքների վերաբերյալ անհրաժեշտ թղթաբանությունը և նկարները հավաքվում և պահպանվում են:
Եռամսյակային հաշվետվությանը կից ներկայացնում ենք հաջողության պատմություն:

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

Ծրագրի հաջորդ եռամսյակում պլանավորվում է շարունակել ծրագրով նախատեսված բոլոր գործողություններերը, մասնավորապես.

1) կենցաղային սպասարկում
2) բժշկական օգնություն և սպասարկում
3) սոցիալ-հոգեբանական օգնություն
4) խորհրդատվության օգնություն
5) լվացքատան ծառայություն
6) առաջին օգնության դեղորայքի տրամադրում
7) մշակութային միջոցառման կազմակերպում

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

Հուլիսի 4-ին Տնային խնամք ծրագրի սոցիալական աշխատողներն ու սոցիալական խնամողները Հայկական Կարիտասի «Արժանապատիվ կյանք տարեցներին» ծրագրի շրջանակում մասնակցեցին «Վիշտ, կորուստ և դրա հաղթահարման ուղիները աշխատանքային միջավայրում» թեմայով հոգեբանական դասընթացին: Դասընթացը վարում էր հոգեբան Արմինե Գմյուրը:

Սեպտեմբերի 11-ին ծրագրի սոցիալական աշխատողն ու բուժքույրը մասնակցել են Wired International- Armenia և Միասին Հասարակական կազմակերպության կողմից կազմակերպված «Առողջությունը՝ բարեկեցության գրավական.WIRED» 5-րդ դասախոսաշարին: Ներկայացվել են Հայաստանում առավել տարածված հիվանդությունների 7 առողջապահական-կրթական մոդուլները՝ Քաղցկեղի ներածություն, Երևանյան հիվանդություն, Կնոջ վերարտադրողական համակարգի կարգավորումը, Արյան բարձր ճնշում, Շաքարախտ, Վարակիչ և ոչ վարակիչ հիվանդություններ, Վահանագեղձի հիվանդություններ: Վերջում մասնակիցները ստացել են դասախոսաշարին մասնակցության հավաստագրեր:

Օգոստոսի 28-ին Տնային խնամք ծրագրի ղեկավարը մասնակցել է ԱՍՀՆ-ի կողմից կազմակերպված քննարկման, որտեղ ներկայացվել է Պետական հավաստագրերի միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց խնամք և սոցիալ-վերականգնողական ծառայություններ տրամադրելու կարգը:

Տնային խնամք ծրագրի ղեկավարը սեպտեմբերի 12-ին և սեպտեմբերի 27-ին մասնակցել է Տարեցների պաշտպանության ցանցի հանդիպումներին, որտեղ քննարկվել են Տարեցների միջազգային օրվան նվիրված միջոցառումները, ինչպես նաև տարեցների խնամքի ոլորտում առկա բուժքույրական կրթության բացերը, ՄԱՀԲ կողմից իրականացված հետազոտությունը և հետագա քայլերը այս ոլորտում:

Շահառուներ

Ձևաչափ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

h/h	Մատուցվող ծառայության անվանումը	Ծառայություն ստացած անձանց թիվը
1.	հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը	25/25
1.1	այդ թվում՝ կին	23
1.2	այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան	1
1.2.1	այդ թվում՝ կին	1
1.2.2	18-40 տարեկան	0
1.2.3	40-65 տարեկան	1
1.3	65 տարեկանից բարձր	24
1.4	այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձինք	3
1.4.1	այդ թվում՝ կին	3
2.	Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը*	Ա – 2 (2 կին) Բ - 23
3.	կենցաղային սպասարկում.	25
4.	բժշկական օգնություն և սպասարկում.	25
5.	սոցիալ-հոգեբանական օգնություն	25
5.1	այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում	11
6.	խորհրդատվական օգնություն	5
7.	այլ ծառայություն (*նշել*) . *լվացքատան ծառայություն*	6

Կազմակերպության գործադիր տնօրեն՝ Գ. Տարասյան

«14» հոկտեմբերի 2024 թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Գլխավոր քարտուղար՝ Ս. Մուրադյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Գործադիր տնօրեն՝ Գ. Տարասյան

(ստորագրություն)

Կ.Տ.